Օգոստ. 15-ին, Խորհրդարանում, փոխ-վարչապետ Ա. Սահակեանը զեկուցում տուեց մահմեդական շարժումների մասին: «Մենք, ասաց նա, հետզհետէ շրջապատւում ենք երկաթէ օղակով: Թշնամին ուզում է ներխուժել մեր երկիրը... Կառավարութիւնը բաւարար չգտնելով ներկայ զինուորական ոյժը՝ կոչ է անում ժողովրդին զոհաբերել իր գոյքն ու կեանքը: Այժմ կառավարութիւնը դիմելով այս բարձր ժողովին՝ յայտնում է, որ կարիք ունի հեղինակաւոր գործիչների և պատգամաւորներից օգնութիւն ստանալու յոյս ունի»:

Խորհրդարանը ընդառաջ գնաց կառավարութեան դիմումին և որոշեց 1) յայտարարել հայրենիքը վտանգի մէջ և հրաւիրել ժողովուրդը՝ լարել բոլոր ուժերը երկրի պաշտպանութեան համար, 2) բժ. Յ. Տէր-Դաւթեանից, Լ. Թադէոսեանից, Յ. Արզումեանից և Հ. Մանուկեանից բաղկացած խորհրդարանական մի յանձնախումբ ուղարկել զօրաճակատ՝ ողջունելու համար զօրքին և բանակի բարելաւման ծրագիր բերել, 3) կոչ ուղղել դաշնակից երկրների խորհրդարաններին:

Մի քանի օրւայ արիւնահեղ կռիւներից յետոյ, հայկական զօրքերը ամրացան դիրքերում Բէյոյիւք-Վեդիի առջև և վերջ տւին գործողութիւններին. զրուցիւնը սկսել էր լրջանալ երկրի միւս մասերում էլ*):

Շարուր-Նախիջևանի դէպքերը, ամենից առաջ, արձագանգ գտան և Սուրմալու—Կողբի շրջանում, ուր հայկական իշխանութիւնը հաստատւել էր մայիս 27-ին: Օգոստ. 7-ին յարձակումներ սկսւեցին Կողբից հարաւ կանգնած հայկական զօրամասի վրա: Առաջին յարձակումը յետ մղւեց, բայց օգոստ. 18-ին թուրքերը գրոհ տւին նոր թափով: Ապստամբեցին և հայ զօրքերի թիկունքում գտնւող Ղամբէլու, Ագարակ և Աբաս Գէոլ գիւղերը, և հայկական զօրամասը ստիպւած եղաւ թողնել Կողբն ու քաշւել Արաքսի ափը: Նրանց հետ հեռացան և մօտ 5000 հայ ու եզիդի բնակիչներ:

Օգոստ. 23-ին թուրքերը սկսեցին սպառնալ և Էջմիածնի կայարանին ու սպանեցին շրջակայ գիւղերից 8 հայ: Օգոստ. 24-ին, Ներքին Ղարխուն գիւղի մօտ ընդհարում տեղի ունեցաւ ապստամբ թուրքերի և մի հայկական վաշտի միջև. վիրաւորւեցին 5 հայ զինուորներ և 1 սպայ: Օգոստ. 25-ին Շոռոլու գիւղի բնակիչները հրաժարւեցին ճանաչել Հայաստանի իշխանութիւնը: Օգոստ. 26-ին թուրքերը կրակ բաց արին Էջմիածնից Ղարխուն մեկնող ամերիկացիների վրա: Օգոստ. 29-ին Ուլուխանլու—Էջմիածնի ճանապարհին սպանւեցին հիւանդանոցից իրենց զօրամասը վերադարձող 4 զինուորներ: Ամբողջ Զանգիբասարը յայտարարեց իրեն ապստամբ և մերժեց ճանաչել հայկական իշխանութիւնը: Զանգիբասարցիներին ղեկավարում էր Խալիլ բէյի համհարզ Մահմէդ բէյը և մի շարք թիւրք չաւուշներ:

---

*) Բէյոյիւ-Վեդիի կռիւների ժամանակ, հայ կոմունիստները երևանում բաց թողեցին կառավարութեան դէմ ուղղւած մի թռուցիկ, որով դասալքութեան էին հրաւիրում զինուորներին: Թռուցիկի հեղինակները ձերբակալւեցին և արտաքսւեցին Հայաստանից: